№ 186 Հոկտեմբերի 8 (20) 1881 Հոկտեմբերի 8 (20) № 186

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են աղգակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է, ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ․ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ․ Անգլիա․ Ֆրանսիա․ Գերմանիա։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ․ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ․ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ․—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ․ Հայ պանդխտաց առողջական վիճակ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

—

Այժմ աւելի և աւելի յայտնվում է թէ Թիւրքիան անկեղծ չէր Հայոց խնդրի վերաբերութեամբ։

Թիւրքիան ինքն ծածուկ կերպով գրգռեց անկարգութիւնները Եգիպտոսում,—յետոյ պատասխանում է պետութիւններին, որ առ ժամանակ պէտք է յետ դցի Հայոց խնդրի լուծելը, որովհետև իր ամբողջ դիպլօմատիան զբաղված է այժմ եգիպտական հարցով։ Թիւրքիան ինքն նպաստում էր քիւրդերի արշաւանքներին պարսից սահմանների վրա,—իսկ այժմ պատասխանում է ռուսաց կառավարութեանը, որ շատ ցաւում է թէ չէ կարող անյապաղ ձեռք տալ Հայաստանի մէջ րէֆօրմների մտցնելու գործին, քանի որ քիւրդերը խաղաղացրած չեն դեռ ևս, որովհետև բարենորոգումների մտցնելը ապարդիւն կը լինի, քանի որ երկիրը դեռ ևս խռովութեան մէջ է։

Մի լաւ ապացոյց նոյնպէս որ Օսմանեան պետութիւնը անկեղծ չէր Հայոց խնդրի լուծման վերաբերութեամբ, այն իրողութիւնը կարող է լինել, որ Վիէննայի մէջ հրատարակվող ֆրանսիական „Ժուրնալ դ'Օրիան“ շաբաթաթերթը արգելվեցաւ Թիւրքիայում, չը նայելով որ այդ լրագիրը իր բոլոր յօդուածներում Հայոց խնդրի վերաբերութեամբ երբէք մի խիստ խօսք ասած չէ նոյն իսկ Թիւրքաց բարձր կառավարութեան կամ Սուլթանի դէմ, ընդհակառակն խօսելով գաւառական պաշտօնեաների զեղծումների և քիւրդ աւազակների հարստահարութիւնների մասին, մի նոյն ժամանակ աշխատում էր համոզել Թիւրքաց կառավարութեանը թէ Հայաստանի մէջ րէֆօրմների մտցնելը և հայոց ազգի պէս մի հաւատարիմ, ընդունակ և աշխատասէր ազգի օրինական պահանջների բաւականացնելը, տալով նրան նահանգական, վարչական ինքնավարութիւն,—օգուտ է նոյն իսկ Թիւրքաց կառավարութեանը։ Երբ նահանգները բարեկարգ, բազմաւոր կը լինեն, այն ժամանակ և ամբողջ պետութիւնը հարուստ, բարեկարգված և երջանիկ կը լինի,—ահա այս էր „Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի պրինցիպը։

Եւ այնու ամենայնիւ, այդ լրագիրը, որ հայերի օգուտները պաշտպանելով, պաշտպանում էր նոյն իսկ Թիւրքիայի շահերը, արգելվեցաւ Թիւրքիայում։

Պարզ է, ուրեմն, որ Բ. Դուռը անկեղծ չէ դէպի Հայոց խնդիրը, եթէ իր շահերը չէ ըմբռնում և ուրեմն ոչ բարեկարգութիւն է կամենում մտցնել Հայաստանի մէջ, ոչ էլ այդ մասին լսել մի խօսք անգամ ուրիշների բերանից։ Պարզ է, ուրեմն, որ Թիւրքիայի միակ նպատակն է Հայոց տարրը կատարելապէս ջնջելու աշխարհիս երեսից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարում արտատպում ենք «Մասիս» լրագրից դօկտոր Փէշտիմալճեանի «Հայ պանդխտաց առողջական վիճակ» վերնագրով յօդուածը։

—

Մեզ հաղորդում են հետևեալը․ «Թիֆլիսի կաթողիկէ սուրբ Գէորգի եկեղեցու ուխտաւորների սենեակները բոլորովին նորոգել է տուել այդ եկեղեցու երեցփոխանը։ Բայց այդ սենեակների ահագին արդիւնքը մնում է մինչև այսօր տէր-Գէորգ քահանայի ձեռքը։ Թեմական տեսչութիւնը հաստատվելուց յետոյ այդ քահանան, որպէս հնամոլ ուսուցիչ, զրկվեցաւ այդ եկեղեցու դպրոցների մէջ ուսուցչի պաշտօնը վարելուց։ Բայց քահանան աշխատեց փակել տալ օրիորդաց դպրոց, իսկ այժմ և տղայոց դպրոցն էլ փակվում է։ Ո՞ւր են գնում արդիւնքները, յայտնի չէ։ Ամենքին յայտնի է որ սուրբ Գէորգի եկեղեցին Թիֆլիսի առաջին եկեղեցին է և այնքան արդիւնք ունի, որ կարող է ոչ թէ միայն երկու դասարանից բաղկացած դպրոց պահել և դպրոցի վրա յատկացնել, ինչպէս այժմ, 1200 րուբլ, բայց կարող էր իր արդիւնքով պահպանել մի պրօգիմնազիա անգամ։ Զարմանալին այն է որ տէր Գէորգի արածի վրա մինչև այժմ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձրել։ Միթէ երեցփոխանն էլ այդ բոլոր անկարգութիւնների վրա ուշադրութիւն չի դարձնի և չի բողոքի դրա դէմ։ Պարոնի ուշադրութիւնն ենք դարձնում և այն բանի վրա, որ եկեղեցու բակի եասը շինված են մի քանի արտաքնոցներ ուխտաւորների համար. դա շատ անվայել բան է։»

—

«С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է որպէս լուր, որ պետական բարձր շրջաններում յարուցված է հարց թոյլ տալ նահանգական զէմստվօների ընտրված անձինքներից մի քանիսներին պետական խորհրդի մէջ անդամ համարվել։ Ասում են որ այդ ընտրված անդամները կը մասնակցեն պետական խորհրդի նիստերին այդ խորհրդի եղած անդամների հետ հաւասար իրաւունքով։ Բայց դեռ ևս յայտնի չէ թէ որքան թւով կը լինեն այդ նոր անդամները համեմատելով Թագաւոր Կայսրից նշանակված անդամների թւի հետ։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են որ այդ քաղաքի հասարակական կեանքի մէջ ոչինչ մխիթարական բան չէ նշմարվում. քաղաքի փողոցները անկարգ դրութեան մէջ են, վաճառականութիւնը շատ ընկած է, քաղաքի շրջականներում յաճախ պատահում են աւազակութիւններ ու մարդասպանութիւններ։ Բացի նրանից առաջին պիտոյքի մթերքները շատ թանգացել են և վերջապէս քաղաքում և շրջականներում տիրում է կ ա ր մ ր ու կ հիւանդութիւնը, որ մանուկներից շատ զոհեր է տանում։ Թղթակիցը աւելացնում է որ Շամախու հայ հասարակութիւնը բաժանված է երկու հակառակ, միմեանց թշնամի կուսակցութիւնների վրա, որոնք միմեանց վնասում են ամեն ազգային գործերում։

—

Մի հալւարցի պարոն մեզ հաղորդում է որ Հալւարի հայ քահանաների մեծ մասը, հէնց որ ազատ ժամանակ են գտնում, հաւաքվում են հրապարակի վրա և զբաղվում են դարդախօսութիւններով։ Նամակագիրը հարցնում է՝ արդեօք տէր-հայրերը աւելի լաւ պարապմունք չեն կարող գտնել, մանաւանդ լաւ գիտենալով որ հալւարցիները կարօտ են իրանց հովիւների օգնութեան, քարոզապէս և մտաւորապէս զարգանալու համար։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են․ «Մեր քաղաքի հայոց դպրոցներում մեծ զեղծումներ են գործվում, թէև գրեթէ ոչ ոք չէ գրում այս մասին մեր լրագիրներում։ Խեղճ վարժուհիները շատ անգամ, առանց որ և է պատճառի, գուցէ միայն այն պատճառով որ չը կարողացան դուր գալ այս կամ այն տեսչին, կամ նշանակութիւն ունեցող վարժապետին, կամայական կերպով արձակվում են դպրոցներից։ Վարժապետներից մի քանիս չեն կարող թողնել նախապետական սովորութիւնը անխնայ ծեծել աշակերտներին և աշակերտուհիներին։ Դպրոցների հոգաբարձուների ժամանակը լրացել է, բայց նրանք չեն կամենում հաշիւ տալ։»

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ մեզ գրում են․ «Այստեղ լուր է տարածվել, որ իբր թէ Սամտրէդի կողմը, որ գտնվում է Քութայիսի և Փօթիի մէջ, հրէանե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ ՊԱՆԴԽՏԱՑ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ

—

Պանդխտութիւնն անընդհատ կը հեռացնէ մեր հայրենիքի հողէն ժողովրդեան թարմ զօրութիւնն։ Հազարաւոր երիտասարդք կը գնան երկար տարիներ շրջիլ անբեղուն քաղաքաց նեխեալ օդին և անբարոյականութեան մթնոլորտին մէջ։ Անդ կը թողուն իւրեանց առողջութիւնն և կորովութիւնն ի վնաս ապագայ սերունդին։

Պանդխտութեան առաջն մի թումբ բարձրացնել մեր կարողութենէն վեր է։ Սակայն եթէ ազգային մարմիններն անկարող կը գտնուին առ այժմ նորա արշաւանաց դիմադրելու, եթէ մասնաւոր պարագայներ տակաւին նմա նպաստել կերևին, չեմք կարող գոնէ նորա վնասներն մեղմացնել և ջանալ նիւթապէս և բարոյապէս անել այնպէս, որ քաղաքաց վատթար ազդեցութիւնն նուազագոյն լինի։ Չեմք կարող՝ որքան հնար է՝ կասեցնել այն բազմատեսակ ախտերու մուտքն ի հայրենիս, զորս պանդուխտներէ շատերն կը ներմուծեն անդ՝ իբր իւրեանց երկարատև բացակայութեան միայնակ արդասիք։

*
* *

Այն կ. պոլսեցի հայերն, որոց ընկերական վիճակն չը տայ առիթ մօտէն քննելու հայ պանդուխտներու վարած կեանքն, որք յատկապէս զբաղած չեն առողջապահութեան փափուկ և կարևոր խնդրոց հետ, չը կարեն երևակայել անգամ թէ ինչ է այդ տաժանելի, հակամարդկային կեանքն զոր կը վարեն նոքա օտար քաղաքաց մէջ։ Այն հանգամանքներն որք բազմատեսակ ժանտական, հիւծիչ հիւանդութիւններ կարտադրեն անպատճառ, անմաքրութիւն, օդի անբաւականութիւն և նեխումն, սնունդի պակասութիւն կամ անընտրողութիւն, մեր պանդուխտներն նոցա ենթարկեալ են կատարելապէս, և որք զօրեղ մի աջակից գտնելով նաև բարոյական ընկճման մէջ, որ ամեն հայրենազերծ թշուառի բաժինն է, լռիկ բայց անընդհատ հայրենեաց յոյսերն և ընտանեաց նեցուկներն յերկիր կը տապալեն։

*
* *

Այս աննպաստ հանգամանաց հաւասար չարաբեր է բազմաբնակ և այլացեղ քաղաքներու մէջ տիրող բարոյականութեան մակերևոյթն, որ փոխանակ միամիտն նողկանք պատճառելու, մի դիւրամատչելի հրապոյր կընծայէ նմա։ Պանդուխտին համար անպարկեշտութեան, մոլութեան գրգութիւնն կամ ասորիճանն երկրին անունէն կախեալ է։ Ինչ որ այպանելի էր և մեղք կը համարուէր իւր գիւղին մէջ, կը կարծէ թէ մայրաքաղաքին մէջ չէ մեղադրելի և ոչ քրէական յանցանաց կարգն։ Այս համոզման կցորդեմք նաև մեծ կեդրոններու մէջ ընդհանրացած չար օրինակներն, և կարեմք հասկանալ թէ մի երիտասարդ, որ իւր մանկութիւնն անցուցած է ժուժկալ կենօք, օդաւէտ վայրերու, առաքինի մի շրջանի մէջ և մեծերու հսկողութեան ներքև, ինչ կերպով կենցաղելու տրամադիր է, ճիշդ այն պահուն ուր կիրքերն կը զարթնուն և երբ նա մոռացութեան մէջ և եթ կորոնէ իր ցաւոց սփոփանքն։

*
* *

Սակաւաթիւ են յայժ կ. Պոլսոյ այն պանդուխտներն՝ որք պատահմամբ մի բացառիկ դրութեան մէջ կը գտնուին։ Նոքա իսկ որք մասնաւոր տուներու մէջ կը ծառայեն, տանն ամենէն վատառողջ անկիւնն կը բնակին։ Տունին մէջն են, բայց տունէն չեն։ Իսկ մեծագոյն մասն խըռնուած խաներու, բաղնիքներու, գոց կրպակներու մէջ, ուր արեգակն մուտք չունի, ուր օդն շրջան չունի, գիշերուան հանգստութիւնն կը խնդրեն այն տաժանելի հոգնութեան փոխարէն որ ունեցել են ցերեկն, օդային ամեն անհարթութեանց ենթարկեալ։

Բանւոր պանդուխտներուն քաջառողջութեան աննպաստ մի պարագայ է նաև նոցա թէ մարմնոյն և թէ բնակութեանց յետին ծայր անմաքրութիւնն, որոց վերայ մի գաղափար ստանալու համար պէտք է, արհեստական պարտաւորութենէ մղեալ, բժշկաց պէս ի մօտոյ զայնս տեսնելու առիթն ունենալ։ Թող պատմեն մեր ազգային արհեստակիցներն թէ ինչ զգացում է որ որ կը պատէ իւրեանց անձն, երբ կայցելեն այդ ախտագոյացուցիչ որջերն, և ինչ պայքար է անողոք նոցա ուղեղին մէջ՝ երբ մի և նոյն պահուն գիտական ուշադրութիւնն կը խառնի այն տխրաբեր ցաւման հետ որ կը ծնուցանէ այն տեսարանն ամեն հայու։

Եւ թող չը կարծեն թէ սուր և երկարօրեայ հիւանդութիւններն պատահական բանիր են այդ խեղճերու մէջ։ Նոցա ընդդիմակայութիւնն ոչ աւելի է ախտաբեր հանգամանաց քան դիւրակեաց քաղաքացւոյն։ Նոքա որք կը տեսնեն փողոցներու անկիւններն յաղթանդամ և քաջառողջ բեռնակիրներ, չը կասկածին թէ քանիներ ևս կան որք կը հեծեն անդին, և թէ քանի՛ն այսօր նոցա տեսածներէն, կը կրեն արդէն իւրեանց մարմնոյն խորերն մի անբուժելի ախտի բողբոջն։

Ենթարկեալ լինելով ամեն տկարացնող հանգամանաց, արբեցողութիւնն ևս նոցա օգնութեան գալով, կարելի չէ որ երկար ատեն պահեն նոքա այն քաջառողջութիւնն որ բերել են իւրեանց հետ իբր միակ դրամագլուխ և զոր վաղ կամ անագան պիտի կորուսանեն։

*
* *

Ըստ մեր մասնաւոր գիտողութեանց և ըստ վկայութեան մեր ազգային արհեստակցաց, սուր հիւանդութեանց հաւասար են նաև նոցա ստացած երկարօրեայ ախտերն։ Եղանակային հիւանդութիւններէ առատ մի բաժին ունին պանդուխտներն, վասն զի ուրիշներէ աւելի կը վտանգեն իւրեանց մարմինն։ Սուր հիւանդութեանց մէջ գլխաւորապէս կը նշմարուին թանչք (տ ի ս ա ն թ ր ի), յօդացաւք (ր ի ւ մ ա թ ի զ մ ա ր դ ի ք ի ւ լ է ր), ընդհատ ջերմք (ֆ ի է վ ր ը է ն թ է ր մ ի թ ա ն թ), թոքատապ (բ ն է օ մ օ ն ի), բայց մանաւանդ անընդհատ ջերմն (ֆ ի է վ ր ը

բը մի տան երկու տարեկան տղայ են չարչարել։ Այդ լուրը ստուգելու համար տեղական ոստիկանութիւնը խուզարկութիւններ է անում։»

—

Քութայիսից մեզ գրում են որ սեպտեմբերի 26-ին այդ քաղաքի օրիորդական հայոց ծխական դպրոցում վիճակախաղ եղաւ յօգուտ նոյն դպրոցի, որից և գոյացաւ 140 ռուբլ գումարը։ Աշակերտուհիները մեծ առաջադիմութիւն են արել ձեռագործերի մէջ։ Հանդէսի ժամանակ աշակերտուհիների խումբը երգում էր։

—

Այս տարի, ինչպէս մեզ գրում են, ամեն բան էժան է Իմէրէթում։ Օրինակ Քութայիսում այս րօպէիս թխած հացի ֆունտը, 2-րդ տեսակի արժէ 4 կոպէկ, ոչխարի մսի ֆունտը 10 կոպ., տաւարին 8 կոպ., գինին, լաւ տեսակից, թունդին արժէ 50 կոպէկ։ Մրգեղէնն էլ շատ էժան է։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Այստեղի երիտասարդների մի խումբ մտադիր է այս օրերս մի հայոց ներկայացումն տալ յօգուտ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի։ Երկրորդ ներկայացումն լինելու է Վարագի (Վանի) երկրագործական ուսումնարանի օգտին։ Կովկասի այլ քաղաքների երիտասարդները անշուշտ կը հետևեն Երևանի երիտասարդութեան օրինակին։»

—

ՄՕՍԿՎԱՅԻ մէջ հրատարակվող «Русскія Вѣдомости» լրագիրը իր վերջին համարներում նուիրել է մի քանի առաջնորդող յօդուածներ հայոց խնդրի պաշտպանելուն։

—

Մեզ գրում են Ղազախի գաւառից։ «Այստեղ աւազակութիւնները շատ յաճախ են կրկնվում։ Այս ամառը մի քանի հայ գիւղերից գողացվեցան մինչև 30 գլուխ տաւար։ Տաւարատէրերը շատ մանգալով, վերջապէս գտնում են գողացած անասուններին մի թուրք գիւղում։ Նրանք գանգատ են տալիս տեղիս դատաւորին, բայց մինչև այժմ դեռ ևս ոչինչ վճիռ չէ կայացել գողացած կենդանիների մասին։»

—

Ստանում ենք անթիւ պօլէմիկական յօդուածներ մեր երկրի այլ և այլ քաղաքներից։ «Մշակի» դիրքը և մեր խմբագրութեան մէջ դիզված նիւթերի առատութիւնը մեզ միջոց չէ տալիս տպագրել այդ տեսակ յօդուածներ։ Հայը շատ սիրում է բանակռիւ և երկար ու բարակ փիլիսոփայութիւններ ամենասահմանափակ հասարակական երևոյթների մասին։ Շատ ուրախ և շընորհակալ կը լինէինք, եթէ մեզ աւելի ուղարկվէին լուրեր, փաստեր, իրողութիւններ և ոչ թէ երկար ու բարակ փիլիսոփայութիւններ։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են։ «Մի ամիս առաջ Սուրմալուի գաւառի Ալիջան հայաբնակ գիւղի մի երիտասարդ գիւղացի դաշոյնով հրապարակապէս սպանել է մի այլ գիւղացու, որին կասկածում էր իր կնոջ սիրեկան լինել։»

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Նուխու հոգևոր ուսումնարանի հոգաբարձութիւնը իր գոյութեան օրից մինչև այսօր ոչ մի անգամ հաշիւ չէ ներկայացրել հասարակութեանը։ Իսկ այս վերջին տարիները ժողովուրդը մեծ նուիրատուութիւններ է արել յօգուտ ուսումնարանի։ Այդ նուիրատուութիւնների մասին ոչ մի տեղ հրատարակված չէ եղել։ Ժողովուրդը զուր չէ գանգատվում, ուրեմն, իր փողերի վատնելու և ի չար գործածելու մասին։»

—

Մեզ գրում են որ Նուխու ուսումնարանը, որ համարեա երկու տարի փակված էր մնացել, այժմ վերջապէս բացվում է նորից, ուսուցչութեամբ և տեսչութեամբ Մարտիրոս Աբրահամեանցի։ «Դժբաղդութիւնը միայն դա է, աւելացնում է մեր թղթակիցը, որ պ. Աբրահամեանը վաղուց յայտնի է մեր հասարակութեանը և ոչ ոքից սէր և համակրութիւն չէ վայելում։»

—

Վիէննայի «Ժուրնալ դ'Օրիան» լրագիրը տպել է իր վերջին համարներում համակրական նամակներ Մարսէլի հայոց հասարակութիւնից, Մոսկվայի հայերից և նոյնպէս մի համակրական նամակ Փարիզից։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լրագիրները քաղուածքներ են արել լորդ Դերբիի մի յօդուածից, որով նա աշխատում է անկողմնապահ պատասխան տալ այն հարցին, թէ ինչպէս կը ներգործի կալուածական նոր օրէնքը իրլանդական կալուածատէրերի և ֆերմերների շահերի վրա և արդեօք կարող է նա խաղաղացնել Իրլանդիան։ Լորդ Դերբիի այն եզրակացութեան է հանում, որ իրլանդական հասարակական կարծիքը կալուածական խնդիրը վճռած չէ համարում և կասկածելի է, որ կարելի լինի խաղաղեցնել այդ երկիրը, քանի որ Իրլանդիայի պահանջների հիմքը իր սեփական պարլամենտի ունենալն է։ Կառավարութիւնը միայն այն աջողութիւնը ունեցաւ, որ ապացուցեց Անգլիայի և Շօտլանդիայի բոլոր բարեմիտ բնակիչներին իր պատրաստականութիւնը՝ բաւականութիւն տալ իրլանդացիների պահանջներին, որքան կարելի է։ Բայց, աւելացնում Դերբի, մենք կուրօրէն չը պէտք է վերաբերվենք կատարվածի հետևանքներին։ Մենք կուի սկզբումն ենք և ոչ թէ վերջում։ Շատ անգամ մենք տեսել ենք օտար երկիրների մէջ, թէ ինչ բանի կարող է հասնել ազգային դրօշակի տակ սկսված շարժումը։ Եւ ահա մենք պէտք է գործ ունենանք հէնց այդպիսի շարժման հետ։ Լորդ Դերբի աւելացնում է, որ ապօրինի չէ իրլանդացիների պահանջը ինքնավարութիւն ունենալու համար, բայց հէնց որ Իրլանդիան իր սեփական պարլամենտը կունենայ, այնուհետև անկարելի է արհեստական միջոցներով սահմանափակել այդ պարլամենտի իշխանութիւնը։ Այդ պատճառով որքան էլ Անգլիան աշխատի կառավարել Իրլանդիան իրլանդական հասկացողութեան համեմատ, այնու ամենայնիւ իրլանդացիների գերակշռող կարծիքը այն կը լինի, որ Իրլանդիան կատարելապէս անկախ պէտք է լինի Անգլիայից։

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական մինիստրների խորհրդի մէջ անհամաձայնութիւն է տիրում ապագայ գործունէութեան նախագծի վերաբերութեամբ և հաւանական է, որ մինիստրական դժուարութիւններ կը պատահեն առաջ քան թէ պատգամաւորների ժողովը գումարվի։ Եթէ Գամբետտային առաջարկվի նոր մինիստրութիւն կազմել, նա մտադիր է վարել արտաքին գործերի մինիստրի պաշտօնը, իսկ եթէ հարկը պահանջէ, բաւականանալ ներքին գործերի մինիստրի պաշտօնով։ Այս դէպքում մինիստրութիւնը հետևեալ կերպով կը կազմվի. Ֆերրի ժողովրդական լուսաւորութեան մինիստր, Լէօն Սէ կամ Ժերմեն Ֆինանսների, Ֆրէյսինէ պատերազմական և Սպիւլեր արտաքին գործերի մինիստրի օգնական։ Բրիսօն պատգամաւորների ժողովի նախագահ կընտրվի։ Քաղաքական շրջանների մէջ համոզմունք է տիրում, որ Գրեվի վճռել է Գամբետտային յանձնել նոր մինիստրութեան կազմելը և որ այժմեան մինիստրութիւնը շուտով հրաժարական կը տայ։

Ֆունիսից ստացված տեղեկութիւնների համեմատ ապստամբները այրեցին Ուէդ-Զարգաւ կայարանը, որ մայրաքաղաքից 30 մղոն հեռաւորութեան վրա էր գտնվում։ Ապստամբները կոտորեցին այդ կայարանի վրա ծառայող բոլոր եւրօպացիներին, իսկ կայարանի գլխաւորին կենդանի այրեցին։ Այրվածի ոսկորները բերված են Ֆունիս, որի եւրօպական թաղում մեծ վրդովմունք է տիրում։ Սպանվածներից շատերը իտալացիներ են։ Այս բոլոր անցքերը հաստատվում են պաշտօնական հեռագրով։ Ուէդ-Զարգաւ կայարանի մօտ եղած կոտորածի մասին լրագիրները հաղորդում են հետևեալ մանրամասնութիւնները։ Կայարանի վրա յարձակվեցին 600 արաբներ։ Նրանք մի ահագին խարոյկ վառեցին, որի վրա թափեցին կայարանի մէջ եղած բոլոր իւղը։ Այնուհետև նրանք տանջում էին եւրօպացիներին և նրանց կրակն էին գցում։

Գերմանական օֆիցերները, որոնք վերադարձան Փարիզ Նանտի մէջ եղած զօրախաղերը տեսնելուց յետոյ, շնորհակալութիւն են յայտնում այն գեղեցիկ ընդունելութեան մասին, որ արին նրանց Ֆրանսիական զինուորականները, մանաւանդ զօրքերի հրամանատար Զան։ Զօրախաղին ներկայ էին շվեդական, բելգիական, աւստրիական և ռուսաց օֆիցերներ։ Գեներալ Զան, դիմելով գերմանական օֆիցերներին, ասաց մօտաւորապէս հետևեալը։ „Գերմանիան մի մեծ պետութիւն է, որ յայտնի է թէ պատերազմական և թէ խաղաղ գործերով։ Ես յոյս ունեմ, որ Ֆրանսիայի և Գերմանիայի ժառանգական թշնամութիւնը հետզհետէ կոչնչանայ և տեղ կը տայ աւելի լաւ յարաբերութիւններին երկու զրացի ժողովրդների մէջ։ Ես այդ ցանկանում եմ մանաւանդ այն պատճառով, որ ես ինքս Հրեռնոսի ափերի մօտ եմ ծնված։"

Փարիզի մէջ մի ժողով կայացաւ, որ հրաւիրված էր անհաշտների մամուլից։ Ժողովի նպատակն էր պահանջել, որ այժմեան մինիստրութեան անդամները դատաստանի ենթարկվեն։ Զը նայելով յեղափոխական մամուլի եռանդոտ ազդարարութիւններին, ժողովը բազմամարդ չէր։ Խօսողներից մէկը ասաց, որ փոխանակ մինիստրների հետ քաղաքավարութեամբ վարվելու, պէտք

թիֆօիտ), որ առաջնոյն հետ ստէպ մահաբեր հիւանդութիւնն է պանդուխտներու համար։ Անընդհատ ջերմին յաճախութիւնը մեկնելի կը լինի դիւրաւ երբ մտածենք թէ սա ընդհանրապէս կը հարուածէ տակաւին մի երկրի օդին չընտելացած (ն օ ն ա ք լ ի մ ա թ է) անձինքն, և այս պատճառաւ է որ հայաստանցիք իւրեանց պանդխտութեան առաջին կամ երկրորդ տարուան մէջ թիֆօյէ կը վարակուին։

Մինչդեռ սենեակին տարողութենէն աւելի անձինք կը կենակցին, հիւանդներն և առողջներն անխտիր, մինդեռ գարշահոտութեանց անզգայ են, օդի անբաւականութեան անուշադիր, հվմանց անզգոյշ, բնական է անշուշտ որ տարափոխութիւնն ստէպ տեղի կունենայ նոցա մէջ։ Դիտած եմք երբեմն որ մի պանդուխտի բնակարանի մէջ ծաղիկ պատահած ժամանակ, սենեակակիցներէ ուրիշներն ևս՝ նոյն ախտէ վարակեալ են։ Նոյնպէս կը լինի նաև ամեն տարափոխիկ ախտի համար։

Թէ այս հիւանդներէն քանին կաղատին աւելի հրաշիւք քան թէ յարմար խնամքներով, հաշիւն դժուար է տալ, վասն զի մեզ չը դիմեն կամ մի և նոյն բժշկի չը դիմեն միշտ։ Առ ի չը գոյէ հարկ եղած դեղերուն և խնամքին, մեռնողներուն թիւն ի հարկէ սովորական համեմատութենէն բարձր է։ Շատ անգամ երբ առիթ կունենամք այդ եղկելիներէն միոյն մահճին մերձենալ, արդէն մահը բաղխել է իր դուռն։

* *

Երկարօրեայ հիւանդութեանց մէջ այն որ առաւել ստէպ կը հարուածէ մեր պանդուխտներն, անտերկայաբար հիւծական ախտն է։

Հայաստանի գիւղերն, միւս երկիրներու գիւղերէն չը տարբերիր հիւծական ախտին նուազութեան մասին։ Գիւղացին առաւել յաջող հանգամանաց մէջ լինելով թէ ֆիզիքական և թէ մտաւորական կացութեան նկատմամբ, որքան աղքատ և անկանոն իսկ լինի նրա կեանքն, յաճախ չենթարկուիր այդ ուտիչ հիւանդութեան, որու մեծ քաղաքաց բնակիչներուն մի քառորդն կամ գոնէ մի հինգերորդն զոհ կը գնան։ Արդ ստուգիւ գիտեմք որ Հայաստանի գիւղերուն մէջ, որք պանդուխտներէն շատին ծննդատեղին են, հիւծական ախտը գրեթէ անծանօթ է, մինչդեռ Կ. Պոլիս և այլ մեծ կեդրոններու մէջ գտնվող պանդուխտներու մէջ ստէպ կը նշմարուի։ Սա կարեն երաշխաւորել մեր այն արհեստակիցներն՝ որք Ազգային Հիւանդանոցի բժշկապետութեան պաշտօնն վարել են։ Այն հաստատութեան տումարներէն նաև յայտնի է որ հիւծական ախտէ այնտեղ դարմանուողներէն մեծագոյն մասն գաւառացիներն են։ Եւ երբ մտածուի թէ պանդուխտ հիւանդներէն շատերն չը դիմեն այդ հաստատութեան և կը մնան այլ և այլ տեղեր, երբ մտածուի թէ ոմանք ևս, եթէ կարող են, կը վերադառնան ի հայրենիս անդ թաղուելու համար, այն ժամանակ հիւծական ախտէ մեռնողներուն համեմատութիւնն կարելի է մակաբերել։

Հայ պանդուխտն մի գլխաւոր պատճառ ևս ունի հիւծելու, այն է հայրենիքի կարօտն, որ տակաւ առ տակաւ սպառելով նրա կենսական ոյժերն, թոքախտն մի դիւրին որս կը պատրաստէ։

* *

Մնաց այժմ մեզ խօսիլ մի ուրիշ երկարօրեայ և ժահրաւոր ախտի վերայ որ ամենէն առաւել մեր ուշադրութիւնն գրաւած է շատ տարիներէ հետէ և որու ստացումն բժշկականութեան կարողութենէ վեր չը լինելով, հետևանքներն ևս կարող ենք գուցէ հուսալ դարմանուելի տեսնել։ Այդ լոկ փոխադրական ախտն՝ Ափրոդիտեան ախտն է (սիֆիլիս), յորմէ մեր պանդուխտները կարծուածէն աւելի վարակուած են, և որու անմիջական և հեռաւոր հետևանքներն ևս քան զևս զգալի կը լինին դժբաղդաբար։

Ասացինք թէ հայ գաւառացին իր ամենէն առոյգ հասակին մէջ կը պանդխտի մեծ քաղաքներն և կը մնայ անդ հինգ, տասն և աւելի երկար տարիներ, հեռու ընտանեկան սփոփանքներէ և շրջապատեալ այն ամեն զզուելի հրապոյրներէ՝ որք զհոգին կարատեն և զմարմինն կապականեն։ Մի միայն բժշկականութեան սահմանին մէջ մնալով, չեմք կարող անդառնալի մի դատապարտութեան վճիռ արձակել նոցա դէմ՝ որք ըստ բաւականի չունին կամաց զօրութիւն ամեն կողմ լարուած թակարդներէ խոյս տալու համար։ Իբր բարոյագէտ, ձայնակից կը լինիմք ամենուն, ժողովրդեան վարքն ու բարքն ուղղելու համար, բայց իբրև բժիշկ՝ էութիւնն հաստատելով կը զոհանամք և կանցնիմք։

* *

Ափրոդիտեան ախտն ուրեմն պանդուխտներու կացութեան բնական բերմամբն մէջերնին վարակուելով զարհուրելի հետևանքներ յառաջ կը բերէ այս ժամուն։ Այս ախտն իւր երկարօրեայ և տարափոխիկ կրկնակի յատկութիւններով, կը վատասեռէ նաև վարակուողի կենակիցներն և սերունդն։ Այսպէս նա մուտք գտած է Հայաստանի անմեղ գիւղացի ընտանեաց մէջ, ուր ներմուծած են մեծ քաղաքներէ վերադարձող պանդուխտներն։ Մեր արհեստակիցներէն նոքա որք պաշտօն վարած են Արմենիոյ մէջ, հաստատել են մեզ թէ, մանաւանդ մի քանի գիւղերէից մէջ, ճիշդ այն գիւղերն որոց որդիքն կը պանդխտին, Ափրոդիտեան ախտն ճարակած է յոյժ և թէ վարակեալներն անխնամ կը փտին։

Այս է ահա այն սոսկալի վտանգն որ ընդարձակիլ կը սպառնայ Հայաստանի ժողովուրդի մէջ։ Սա անուղղակի կերպով և տարբեր ձևերով նաև կը կատարէ իւր ապականարար դերն։ Եթէ սերունդն չը ժառանգէ միշտ զայն, նորա իբր հետևութիւնք կունենայ յայնմանէ ոչ նուազ նուազեցուցիչ ախտեր, ինչպէս են խոյլն, կարկինոն (ք ա ն ս է ր), հիւծականն և ուրիշներն, որք առոյգ և քաջառողջ մի ժողովուրդ կարող են քիչ միջոցի մէջ այլասեռել։

Այս ախտին անխնամ մնալուն մէջն է իւր զօրութիւնն։ Եթէ ներկայ ժամանակիս մէջ Ափրոդիտեան ախտն կորուսել է իւր վաղեմի աղետաբեր սաստկութիւնն, եթէ միջին դարու ահռելի տեսարաններն ոչ ևս կը կրկնուին մեր օրերով Եւրոպիոյ մէջ, սորա միակ պատճառն նորա ստած-

է նրանց ժանդարմների ուղեկցութեամբ դատարանը ուղարկել, որպէս զի յետ առնվի նրանցից այն փողերը, որոնց նրանք գողացել են։ Մէկ ուրիշը ապացուցանում էր, որ յեղափոխութեան զարգացման արգելքը Գամբետտան է։ Պէտք է նրանից անպատճառ ազատվել ու, եթէ հարկաւոր լինի, նրա դէմ յեղափոխական միջոցներ գործադրել։ Հէնց որ բուրժուաները կը զրկվեն իրանց առաջնորդից, սոցիալական յեղափոխութիւնը ինքն ըստ ինքեան կը կատարվի։ Վերջը ժողովը մի վճիռ կայացրեց, որ մինիստրներին դաւաճան և կաշառակեր է անուանում։

ԳԵՐՄԱՆԻԱ

—

„National Zeitung“ լրագիրը թիւրքիայի բաժանման վերաբերութեամբ յօդուածի մասին նկատում է հետևեալը։ „Ամենից շատ զարմանալի է այն, որ „Times“ լրագրի նախագիծը դիմում է այնպիսի մի պետութեան, որ ամենից շատ յայտնի է իր խաղաղասիրութեամբ և բոլորովին չէ ցանկանում ընդարձակվել, որ զբաղված է գըլխաւորապէս իր ներքին գործերի կարգադրութեամբ։ Ակամայից միտք է ծագում, որ «Times» լրագրի առաջարկութիւնը ուղղված է ոչ թէ աւստրիական կառավարութեանը, այլ Ռուսաստանին և Թիւրքիային։ Գուցէ Բ. Դրանը կամենում են հասկացնել, որ, եթէ թիւրքաց պետական մարդիկ 'ի նկատի չեն առնի Անգլիայի շահերը Եգիպտոսում, Անգլիան կարող է թիւրքայից վրէժխնդիր լինել, իսկ Ռուսաստանին հասկացնել, որ հարկաւոր դէպքում Անգլիան պատրաստ է տալ Նրան Կ. Պոլիսը կայիրէի և Ալէքսանդրիայի համար։ «Times» լրագրի յօդուածից կարելի է եզրակացնել, որ Անգլիան պատրաստ է ի նկատի առնել եւրօպական քարտէզի ամէն տեսակ փոփոխութիւնը, միայն թէ նա ապահոված լինի Հնդկաստանի և Եգիպտոսի կողմից։ Մենք չենք կարծում, որ ներկայումս կարողանան տեղ ունենալ այդպիսի առաջարկութիւններ, այնու ամենայնիւ „Times“ լրագրի յօդուածը մի նախազգուշութիւն է, որ ցոյց է տալիս, որ պէտք չէ Անգլիային շատ զրգռել։ Ով որ ճանաչում է Չարլզ Դիլկի անձնաւորութիւնը, նա կարող է իմանալ, թէ այդ մինիստրը ինչեր կարող է անել։ Առհասարակ աններելի սխալ կը լինէր վատ կարծիք ունենալ Անգլիայի ոյժի և եռանդի մասին այն դէպքերում, երբ հարցը նրա շահերին է վերաբերում։“ Ֆելդմարշալ Մոլտկէ Կիլի նաւահանգստի բացման ժամանակ արտասանեց հետևեալ ճառը։ „Այն բոլոր պարտականութիւններից, որ դրված են իւրաքանչիւր քաղաքացու վրա, ամենանշանաւորը դրված է զինուորական դասի վրա, որ պէտք է պաշտպանի իր հայրենիքի սահմանները։ Դրա համար պաշտպանողական երկու բաժիններ կան՝ զօրքերը և նաւատորմը։ Եթէ հարևանցի կերպով նայենք, այդ երկու բաժինների կոչումները զանազան են։ Խաղաղ ժամանակ պէտք է պատրաստվեն ապագայ յաղթութիւնների հիմունքները։ Պատերազմական մարդիկ այդ ժամանակ ապրում են իրանց հայրենի հողի վրա և միայն կարճ ժամանակով իրաւունք ունեն այնտեղից հեռանալու համար։ Ծովազնացները ընդհակառակը հէնց խաղաղ ժամանակ պէտք է պաշտպանեն իրանց երկրի պատիւը հեռաւոր ծովերի վրա, պէտք է պաշտպանեն օտար երկիրներում ապրող իրանց հայրենակիցներին և ապահովեն գերմանական անուան հեղինակութիւնը։ Պատերազմի ժամանակ հայրենիքի պատիւը զօրքերին է յանձնվում, մինչդեռ նաւատորմի գլխաւոր կոչումն է հայրենի ափերի պաշտպանութիւնը։ Բայց կոչումների այդ զանազանութիւնը միայն երևակայական է. իսկապէս այդ երկու բաժիններն էլ կարողանում են հասնել իրանց նպատակին միայն այն ժամանակ, երբ եղբայրաբար ձեռք ձեռքի տուած են գնում։ Պատերազմական նաւերը միայն այն ժամանակ կարող են աջողութեամբ պաշտպանել Գերմանիայի ափերը, երբ վերջինները նրանց համար լաւ ապաստան են կազմում, որ նրանք կարող են դալ, ինչպէս թռչունները իրանց բները, իսկ թռչունները իրանց բները շինում են ապահով տեղերում։ Ուրեմն մեր ծովազնացների բներն էլ պէտք է ապահով լինեն և այդ պատճառով նաւատորմի և զօրքերի մէջ միութիւնը անհրաժեշտ է։ Թէ զօրքերը և թէ ծովազնացները միատեսակ սիրում են իրանց հայրենիքը և կայսրին։ Նրանց նպատակն էլ մէկ է և այդ նպատակին նրանք կարող են հասնել միայն այն ժամանակ, երբ եղբայրաբար ձեռք ձեռքի տուած կաշխատեն։“

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կամենալով յարգել Գարֆիլդի յիշատակը Ֆըրանկլնտ ամերիկական քաղաքը վճռել է Գէյսատոկ սարը անուանել Գարֆիլդ։ Պէտք է ասել, որ ուղիղ այդ սարի մօտ գտնվում են նոյնպէս երկու ուրիշ սարեր, որոնցից մինը Լաֆայէտ, իսկ միւսը Լինկօլն անուն է կրում։

* * *

Ամերիկայի Դոլօրէս նահանգը իր քաղաքների թւում հաշւում է դարձեալ մի նոր քաղաք, Դիւրանգօ անունով, որ միայն տասն ամիս է որ գոյութիւն ունի։ Զը նայելով այդ կարճ ժամանակամիջոցին, քաղաքն ունի արդէն 40 փաստաբաններ, երեք ամենօրեայ թերթեր, եօթ հիւրանոցներ, երեք հատ փոխառու բանկ, երեք դեղատներ, հինգ հատ ոսկերիչների խանութ, հինգ մանրավաճառանոցներ, չորս հատ օղի գործարան և մահուդի մի գործարան։ Ահա ինչպէս են կազմվում և զարգանում քաղաքները Ամերիկայում. այդ երևոյթը ամենալաւ ապացոյց է Ամերիկայի ներքին տնտեսական ոյժի։

* * *

Այս օրերս Ս. Պետերբուրգի յայտնի մի ատամնաբոյժի հետ մի շատ զարմանալի դէպք է պատահել։ Սովորական ժամին, երբ բժիշկը իր տանը հիւանդներ է ընդունում, մտնում է նրա մօտ մի շատ գեղեցիկ և շքեղ կերպով հագնված երիտասարդ կին, յայտնելով որ կամենում է իր հիւանդ ատամներից մինը հանել տալ։ Բժիշկը նստացնելով տիկնոջը բազկաթոռի վրա, պատրաստվում է ատամը հանել, բայց յանկարծ հիւանդը տեղից վեր թռչելով, գրկում է բժշկին և արտասուքը աչքերին խոստովանվում է որ եկել է ոչ թէ ատամը հանել տալու, այլ իր սէրը, որ իրան ամեն բան մոռանալ է տալիս, բըժշկին յայտնելու համար։ «Ես ձեզ վաղուց է որ սիրում եմ, ասում է տիկինը, բայց դուք ինձ վրա ոչինչ ուշադրութիւն չէիք դարձնում։» Երիտասարդ բժիշկը հիացած՝ հանգստացնում է տիկնոջը, ասելով որ թէև ինքն մինչև այժմ երբէք նրան պատահած չէ, բայց այս մի քանի րոպէները բաւական են իր մէջ անսահման սէրը վառելու դէպի հրաշալի դեղեցկուհին։ Սիրոյ զգացմունքը յայտնելու ամենավառ ժամանակ, կինը վերկենալով յայտնում է որ պէտք է շտապի դէպի տուն, ուր Նրան սպասում է խանդոտ ամուսինը, բայց մի և նոյն ժամանակ խնդրում է բըժշկին միւս օրը այս ինչ ժամին գտնվել այս ինչ տեղ։ Սիրահարված բժիշկը ճանապարհ է գցում տիկնոջ մինչև սանդուխները և վերադառնում է իր սենեակը։ Բայց որքան զարմացած էր նա, երբ մի կէս ժամից յետոյ ձեռքը դէպի ժամացոյցը տանելով, նկատում է որ գեղեցիկ ոսկէ շղթան կտրած է և ոսկէ ժամացոյցը անհետացած է։ Այդպիսով յայտնվում է որ այդ տարօրինակ ձևով իր սէրը յայտնող կինը եղել է մի հասարակ գող։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 հոկտեմբերի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ իր ամուսնի հետ հոկտեմբերի 4-ին վերադարձաւ Ս. Պետերբուրգ։ Անուանի Բարձրագոյն հրամանով կոմս Վալուևի իր խնդիրքի համեմատ հիւանդութեան պատճառով արձակված է մինիստրների մասնաժողովի, կովկասեան մասնաժողովի, խնդիրների մասնաժողովի նախագահական պաշտօններից, մնալով պետական խորհրդի անդամ, ստատսսեկրետարի և պատուաւոր հոգաբարձուի կոչումների մէջ։ Մինիստրների մասնաժողովի նախագահ նշանակված է Բէյտերն։ Մի և նոյն ժամանակ Բէյտերն ժամանակաւորապէս կը նախագահէ գիւղական ազգաբնակութեան գործերը կարգադրող մասնաժողովին։ Խնդիրքների մասնաժողովի ժամանակաւոր նախագահ նշանակված է իշխան Դոլգորուկով։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. էկսպերտների նիստը հոկտեմբերի 5-ին սկզբնական հարցեր չը վճռեց։ Խիչքների խանութները յանձնելու մասին մեծամասնութիւնը կարծում է աճուրդով տալ։ Քուէարկութիւնը յետաձգված է մինչև չորեքշաբթի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. երկրորդ 92 ր. 50 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 92 ր. 75 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 224 ր., երկրորդ 218 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 64 կ.։ Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 26,3 պէնս, Ամստերդամի վրա 131,25 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 222 մարկ։ Փարիզի վրա արժէ 274 Ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ման եղանակին վերջին կատարելութեան և ստուգութեան հասնիլն է և ոչ այլ ինչ։ Որտեղ նա չը հալածուի այժմ, նոյնն է մնացել ճիշդ։ Թող դարձին այսօր ամեն հոգատարութիւնք այս ախտին տապալման համար, թող փակուին Եւրոպիոյ մասնաւոր հիւանդանոցք, խորհրդանոցք, և հիւանդութիւնն իւր գլուխն կը բարձրացունէ դարձեալ և նոյն կոտորածն կանէ ինչ որ կանէր երբ, պժգալի այցելու, անցաւ Ամերիկայէն Եւրոպա։

* * *

Ի՞նչ միջոց ունի հայ պանդուխտն, գտնէ նորա ճիրանին մէջ անկնելէ վերջն, իւր նախկին առողջութիւնն և մաքրութիւնն գտնելու համար։ Գրեթէ ոչինչ։ Նա երկար ժամանակ կը մնայ անխնամ, ժահրն կը պատէ մարմնոյն ամեն կողմն, և ապա, ճարն հատած, կը դիմէ այն շաղակրատներէն միոյն որք Կալաթայի և Կ. Պոլսոյ կողմն կեռան յուսահատելի առատութեամբ։ Դեղն ախտէն աւելի չարագոյն։ Ազգային հիւանդանոցի դռներն գոց են իրեն համար, զի հիւանդ առաջ նա մեղաւոր կը նկատուի։ Ամօթխածութիւնն, անհոգութիւնն կարգելեն զայն դիմելու անմիջապէս ծանօթ բժիշկներէն միոյն, որք չը զլանան երբէք իւրեանց խորհուրդն և օգնութիւնն, և երբ մեք առիթ կունենամք ի վերջէ հանդիպելու մի այնպիսի թշուառի, շատ անգամ ախտն արմատացել է և զայն խլելն դժուարին։ Եւ սակայն եթէ այս մասին օգնութիւններն դիւրին և մատչելի լինէին, քանիներն կազատէին այդ փտեցուցիչ ախտէն, իւրեանք և իւրեանց սերունդներն։

* * *

Սուր և երկարօրեայ սովորական հիւանդութեանց համար գոնէ Կ. Պոլսոյ մէջ կայ մի խընամող հաստատութիւն, թէպէտ և խիստ անբաւական։ Սակայն հիւանդանոցներն, որքան և ընդարձակ լինին, մի քաղաքի մէջ երբէք չը բաւեն ամեն կարօտեալ հիւանդի օգնելու համար, եթէ նոցա չը սատարեն մասնաւոր խնամատու ընկերութիւններ, որք հիւանդն իւր բնակած տեղն դարմանելու կը զբաղին։ Վատ բան է հիւանդանալն, բայց մի հիւանդանոցի մէջ տառապիլն աւելի դժնդակ է։

Հիւանդ հայ պանդուխտներն գտնել և խնամելու համար մի փոքրիկ ընկերութիւն անհրաժեշտ է Կ. Պոլսոյ մէջ, և այս ընկերութիւնն կանանց վայելուչ է որ կազմեն։ Այսպիսի մի ընկերութեան բարոյական ազդեցութիւնն ես մեծ կը լինի պանդխտաց վերայ, վասն զի կը զգան այն ժամանակ թէ ոչ ես անտէրունչ են նման բարիներու։ Հայաստանի խորերն բնակող մեր ազգակիցներուն բարիքն մտածել կելնեմք, և չը տեսնեմք նոքա որք մեր սեամին վերայ կեցել են հիւանդ և լըքեալ։ Ի՞նչպէս մեկնել որ այս ընկերութիւնն կազմելու տարօրինակ տենդի ժամանակ, հայ կանայք և օրիորդք տակաւին իւրեանց ուշադրութիւնը չեն դարձուցել այս կողմ, և սակայն նոյնչափ առաքինութիւն և ազգասիրութիւն է հիւանդ հայ պանդուխտին օգնութեան հասնիլն, որչափ գիւղային դպրոց բանալն և պարզարարութիւնն։

*

Իսկ Ափրոդիտեան ախտին վերաբերմամբ, մեք կարծեմք թէ կարող եմք առաւել ևս մաքառիլ նաև նորա դէմ և ջանալ որ իւր հարուածներն այնչափ ուժգին չը լինին։

Եւ նախ պէտք է որ մեր ժողովրդական լրագիրներն երբեմն զգուշացնեն պանդուխտներն որ այդ ախտն ստանալու վտանգներուն չենթարկին։ Սա բարոյագէտի պարտքն է զոր անհրաժեշտ է զլանալն։ Պէտք է ապա որ քահանայական դասն խրատեն պանդուխտներն այս մասին, և այս քարոզութիւնն աւելի ազդեցութիւն կը ստանայ կարծեմք եթէ քահանայներէ աւելի վարդապետք անեն։ Սոցա ձայնն աւելի լըսելի կը լինի, վասն զի կը միացնեն խրատն ողջախոհութեան բարի օրինակին հետ։ Լաւագոյն է զգուշանալ քան բուժել, կասեն իրաւամբ։

Իսկ լոկ բժշկական տեսակէտով, պէտք չէ որ սկզբամբ, ազգովին, վճռած լինիմք այն խեղճերուն անօգնական թողուիլն։ Պէտք է արտօնութիւն տրուի ազգային հիւանդանոցի վարչութեան ընդունիլ և այս ախտէ վարակեալներն։ Բժշկապետն յատկացեալ օրեր պէտք է տայ իր խորհուրդն անդ ներկայացողներուն և պէտք է որ դեղերն ձրիապէս հայթայթուին։ Այդ հիւանդներէ խիստ մեծագոյն մասն ոտքի վերայ են և պէտք չունին հիւանդանոցի բեռ լինելու։ Իսկ նոքա որք անկարող են աշխատելու, պէտք չէ որ այն յարկէն արտաքսուին։ Նոքա իւրեանց մեղք տուժել են և չարաչար տուժել։ Հիւանդանոցներու մէջ գտնուողներն շատերն տեսակ տեսակ մոլութեանց հետևանքէն անկած են սնդ, և ոչ ոք մտածել է քննել նախ իւրաքանչիւրի բարոյականութեան աստիճանն և ըստ այնմ ընդունիլ կամ ոչ։ Իսկ եթէ կը կարծուի որ Ափրոդիտեան կամ նորա նման ախտէ վարակեալ հիւանդներն դայթակղութիւն կը լինին մեր ազգային հիւանդանոցի պարկեշտ պատապարեալներուն, այն ժամանակ դիւրին է մասնաւոր մի տեղ յատկացնել նոցա այն յարկէն հեռի։

* * *

Դիւրին է, ասացինք, մոռանալով մեր միակ բարեգործական հաստատութեան ողորմելի վիճակն, հակառակ նորա անձնուրաց Հոգաբարձութեան ջանից։ Ե՛րբ Կ. Պոլսոյ հայ հասարակութիւնն պիտի համոզուի թէ ամեն օգտակար գործ չէ կարելի կատարել, եթէ նա այսպէս ժլատ զբաղուի—անխիղճ պիտի ասէինք—, և թէ ազգատին և պանդուխտին վիճակն բարելաւելու համար ամեն ջանք, ամեն խորհուրդ անօգուտ են եթէ նիւթապէս չաջակցի ժողովուրդն։

Ահա երկու առաջարկութիւնք ևս, որ մեր արհեստական, մարդկային պարտաւորութիւններն թելադրեցին զմեզ անել։

Արձագանք գտնե՞ն պիտի։

Տարակուսելի է։

Տ. ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԴՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՄԻԽԱՅԼՕՎԻՉ ԳԱՐԲՕՎՍԿԻ-ՋԱՐԱՆԵԿ բնակվում է Գօլօվինսկի փողոցի վրա ԴՕԲՐԺԱՆՍԿՈՒ տանը: Մուտքը Գօլօվինսկի փողոցի կողմից: Ընդունում է ամեն օր առաւօտները 8—10 ժամ, երեկոները 6—8 ժամ: ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ գործերի համար գլխաւորապէս երեկոները:

4—5 (2)

144 Արծրունու գալէրէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների:

Մեր ընկերութեան ԹԷՅ ԳՈՐԾԱԾՈՂՆԵՐԻՑ ԽՆԴՐՈՒՄ ՆԵՔ ուշադրութիւն դարձնել, որ բանդերօլների վրա անպատճառ ԼԻՆԵՆ Կ. և Ս. ՏԱՌԵՐԸ:

Կ. և Ս. ՊՕՊՕՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ
Առևտրական տուն ՄՕՍԿՎԱՅՈՒՄ:

7—14

Այս օրերս ստացվեցաւ Թիֆլիսում մեր գիտնական հայրենակից պ. ԷՄԻՆԻ բրօշիւրը ԹԻՖԼԻՍԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԹՈՎ ԳՐԱԾ. „Мойсей Хоренскій и древній эпосъ армянскій“—գինը 1 ռուբլի: Կարելի է ստանալ Մշակի խմբագրատանը և „կենտրօնական գրավաճառանոցում“:

5—5

ԵՐԴՈՒԵԱԼ ՓԱՍՏԱԲԱՆ
ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Այժմ բնակվում է Սօլօլակ, Սադօվի փողոցում, Մարգարեանի տանը № 31:

2—5

ՏԻԿԻՆ ՇՋՈՒԿԻՆԱՅԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ստացված են ամենավերջին ձևերի կանանց և երեխաների ԳԼԽԱՐԿՆԵՐ ամենալաւ նիւթից և ծախվում են ամենաէժան գներով: Յարգոյ հասարակութենից խնդրվում է ուշադրութիւն դարձնել: Նոյն խանութում ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ կանանց և երեխաների ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ: Վելեամինօվսկայա փողոց, տուն Խօսրօեվի, Խանդամիրօվի խանութին կից:

2—8 (2)

ՖՐԱՆՍԵՐԷՆԻ և ԻՏԱԼԵՐԷՆԻ դասեր: ՀԱՐՑՆԵԼ „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ:

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս գի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական խանութը կշռում է ՄԱՔՈՒՐ թէյ առանց ԹՂԹԻ և ԱՐՃՃԻ:

61—100

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կօնֆեկտներ, ԿԱԿԱՕ, բրինձ, ԱՄՍԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ, ալբօմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսրբիչներ, կլեօնկա, գուլպաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն: ԹԷՅ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մագնեզիա, խմոր ԾԱՐԱՒԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէմ, կարբօլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկլօզետի համար, պարսկական փօշի: 80—100

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ դասեր ընտանիքներում: ՀԱՐՑՆԵԼ „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ:

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաօ, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուգօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՌԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսրբիչներ, թաշկինակներ, կանանց գուլպաներ, մարդկերանց գուլպաներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականներին ՄԵԾ քանակութեամբ ծախվում է ԹԷՅ. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., րէվօլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբօմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և րէվօլվերների Թիֆլիսում:

25—100

Դուրս եկաւ մամուլի տակից պ. Ղ. Աղայեանցի մի նոր աշխատութիւնը

ԱՆԱՀԻՏ

ՀԻՆ ԴԱՐՈՑ, ԸՆԹԵՐՑԱՍԷՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Գինն է 50 կօպ. ցանկացողք կարող են դիմել մեզ մեր տպարանի հասցէով:

Մովսէս Վարդանեանց

Դուրս եկաւ մամուլի տակից Գ. ԱՂԱՅԵԱՆՑԻ ԱՑՐՈՒԲԵՆԻ ԱՅՐԲԵՆ ԶՈՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՆՈՐԱՆՈՐ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՄԲ: Գինն է հատով գնողների համար 20 կօպէկ, իսկ գրավաճառներին և հարիւրով գնողներին 25% զիջումն կը լինի: Ցանկացողք կարող են դիմել մեզ մեր տպարանի հասցէով:

Մովսէս Վարդանեանց

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
ԽԱԹԱԲԱԼԱ
(Նոր մշակած)
Ծախվում է կենտրօնական և կովկասեան գրավաճառանոցներում: գինն է 50 կօպէկ:

9—10

ՅՕԳՈՒՏ ԹԻՖԼԻՍԻ Րէալական ուսումնարանի հայ-աշակերտաց ազգայ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ, ժողովվում են հայերէն ընթերցանելի գրեանք: Ցանկացողք թող բարեհաճեն ուղարկել իրանց նուէրները հետևեալ հասցէով.—Тифлисъ. Реальное училище, Х. Чилингарянцу.

5—6

Մամուլի տակն է, և շուտով լոյս կը տեսնի Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը. „ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ“ ծխական դպրոցների 4-դ տարվայ դասընթացք, և միանգամայն 1-ն, 2-դ և 3 տարիների համար հրահանգ:

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀԱՅԵՐԷՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ՝

1	Տէր-Ղևոնդեան՝ Մայր. լեզու մ. ա.	„ 35 կ.
2	— — — — — — մ. բ.	„ 40 „
3	— — — — — — մ. գ.	„ 70 „
4	Ս. Մանդինեանց՝ Նահապետական և Հայր. աշխարհ.	„ 65 „
5	— — — — Դիւցազնական աշխարհ.	„ 30 „
6	— — — — Ընտանեկան աշխարհ	„ 25 „
7	Կոստանեանց՝ Ծաղկաքաղ արձակ և չափածոյ բանից.	„ 25 „
8	— — — — — երկրորդ շրջան	„ 60 „
9	— — — — — երրորդ շրջան	„ 40 „
10	Աղայեանց՝ Ուսումն մայր. լեզուի ա. տ.	„ 15 „
11	Նազարեանց՝ Ուսուցիչ՝ Հայոց լեզուի գ. տարի	„ 40 „
12	— — — — — — Չորր. տարի	„ 60 „
13	Այվազեանց՝ Նախակրթանք գրաբ. լեզուի մ. ա.	„ 40 „
14	— — — — — — մասն երկր.	„ 45 „
15	— — — — — — մասն երր.	„ 50 „
16	Եղիշէ՝ պատմութիւն Վարդանանց	80 կ. և 1 — „
17	Եզնիկ՝ Եղծ աղանդոց.	1 — „
18	Բագրատունի՝ Տարերք քերականութեան	1 25 „
19	Պալասան՝ Քերականութիւն աշխ. լեզուի.	„ 55 „
20	Բաղաթրեանց՝ Քերակ. աշխ. լեզուի.	„ 20 „
21	Տէր-Ստեփանոսեանց՝ Սկզբունք քրիս. հաւատ.	„ 50 „
22	Պօպովեան՝ Սրբազան պատ. հին կտակարանի.	„ 60 „
23	— — — — — — Նոր կտակարանի.	„ 60 „
24	Հէնչէլ՝ Թուաբանական խնդ. ժողովածու (Ս. Մանդ.)	„ 40 „
25	Վարձելեան՝ Դասագիրք թուաբանութեան.	„ 70 „
26	Русское слово Տէր-Դաւթեանի.	„ 45 „
	Ամենատեսակ ռուսերէն լեզուի ձեռնարկներ:	
27	Սիմոնեանց Ն. Ընդհ. աշխարհագրութեան նախագիտ.	„ 35 „
28	— — — — — Նոյն մասն ուսումնական	„ 60 „
29	— — — — — Նոյն մասն քաղաքական	„ 60 „

Նոյն տեղը վաճառվում են նաև այն գործածական դասագրքերը, որոնք այս յայտարարութեան մէջ չեն յիշատակված: Բացի սորանից՝ կենտրօնական գրավաճառանոցին կից բացուած է նաև ուսումնարանապատկան և կանցելարիական ամենատեսակ իրեղէնների առանձին բաժանմունք: Գաւառական ուսումնարանների պահանջները կատարվում են առանց յետաձգութեան: Գումարով գնողներին նշանաւոր զիջումն է լինում: Անփող պատուէրներն անկատար են մնում: